Ազգ
Azg
7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 214(5297)
ISSN: 1829-1651

# «Զրո խնդիր հարեւանների հետ»-ի գաղափարախոսը դեկտեմբերի 12-ին կլինի Երեւանում

Դեկտեմբերի 12-ին Երեւանում տեղի կունենա Սեւծովյան տնտեսական համագործակցության նիստը, որին մասնակցության հրավեր ուղարկվել է բոլոր ներգրավված երկրների արտգործնախարարներին, այդ թվում՝ Թուրքիայի: Այս կազմակերպության նախորդ երեւանյան նիստին, դեռեւս 2009-ին, Հայաստան էր ժամանել այդ ժամանակ ԱԳ նախարար Ալի Բաբաջանը, որին ընդունեց նաեւ Հայաստանի նախագահը:

Հարեւանները փորձ են անում հրավերը ներկայացնել այլ հարթության մեջ. հարկ է նշել, որ Հայաստանի պարագայում նորմալ գործընթացի մաս կազմող հրավերներից այլ բովանդակություն սարքելն անիմաստ է:



Դրա փոխարեն հաստատ ինչ-որ բան սարքելու փորձ կարվի այն հանգամանքից, որ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, ըստ թուրքական «Todayszaman» անգլիալեզու տարբերակի, ընդունել է հրավերն ու դեկտեմբերի 12-ին կլինի Երեւանում: Այս մասին Դավութօղլուն հայտարարել է Անկարայի օդանավակայանում՝ Կիեւում տեղի ունեցած ԵԱՀԿ նախարարական խորհրդի նիստից վերադարձին: Ընդ որում, Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավարի խոսքերով, Երեւանից եկած հրավերն ընդունվել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի հետ խորհրդակցությունից հետո:

Նշվում է նաեւ, որ Դավութօղլուի օրակարգում հաջորդը այցելությունն է Աթենք դեկտեմբերի 13-ին, իսկ հաջորդ օրը կլինի Կիպրոսի այն հատվածում, որ աշխարհին փորձում է ներկայանալ որպես «Կիպրոսի թուրքական հանրապետություն»:

Առավել հետաքրքրական է, որ թուրքական մի շարք այլ լրատվամիջոցներ իրավիճակն այնպես են ներկայացնում, թե Դավութօղլուն ոչ թե նշված միջոցառմանն է ներկա գտնվելու, այլ «փորձ է արվում դիվանագիտական առաջին խթանն անել 2009-ին երկու երկրների միջեւ արձանագրություններից հետո»: Տեղեկացնում են նաեւ, թե Դավութօղլուն դեկտեմբերի 5-ին Կիեւում հանդիպել է «հայաստանցի իր գործընկերոջ հետ», մինչդեռ Հայաստանի ԱԳՆ խոսնակ Տիգրան Բալայանը թվիթերյան իր էջում հերքում է այդ լուրը, շեշտելով, որ Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը որեւէ հանդիպում չի ունեցել Դավութօղլուի հետ:

Հայաստանցի իր գործընկերոջը Դավութօղլուն չի հանդիպել, թեեւ այդ մասին տեղեկություն է տարածվել, որում նշվում էր նաեւ, որ Թուրքիայի արտգործնախարարը հանդիպել է Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի եւ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ ու «քննարկել ղարաբաղյան հարցը, որն Անկարան համարում է կարեւոր Երեւանի հետ հարաբերություններում»:

Վ. Պ.

# «Ինձ համար ցավալի է, որ աղետի գոտում 4030 անօթեւան ընտանիք կա դեռ»

ՌՈՒԶԱՆ ՊԵՊԱՆՅԱՆ



Հարազատի ծանր կորուստ ապրած՝ աղետի գոտու շուրջ 500 հազար բնակիչների հետ արդեն 25-րդ տարին Սպիտակի երկրաշարժի ծանր հիշողություններն է վերապրում **Սաբիր Ստեփանյանը**, ով այդ տարիներին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահության անդամ էր, ՀԽՍՀ պետական մատակարարումների կոմիտեի նախագահ, երկրաշարժի հետեւանքների վերացման անմիջական պատասխանատուներից: Այդ դժնդակ օրերի նրա անձնուրաց գործունեության մասին թերեւս ամենաբնորոշ ու դիպուկ գնահատականը տվել է այդ ժամանակ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Իվան Սիլաեւը. «Եթե ինչ-որ բան անելն անհնար է, հանձնարարեք Ստեփանյանին, նա կարող է անել հնարավորն ու անհնարինը»: Մինչ օրս աղետի հետեւանքների ամբողջական պատկերը ճշգրիտ թվագրությամբ մտապահող զրուցակիցս, այնուամենայնիվ, համարում է, որ որեւէ չափորոշիչով կամ սանդղակով հնարավոր չէ չափել մարդկային մեծ վիշտն ու ցավը, որ այդ օրերին ապրեց ողջ հայ ժողովուրդը.

- Ամենասարսափազդու ֆիլմերում անգամ անհնար է ներկայացնել այն ահարկու պատկերը, որ տիրում էր Հայաստանի երկու մեծ քաղաքներն ու հարյուրավոր գյուղեր ընդգրկող աղետի գոտում. Սպիտակն ու Լենինականը, ամբողջովին ավերակների մեջ, մարտի դաշտ էին հիշեցնում, ամենուր դիակներ, լալահառաչ ծանր վիրավորներ, խուճապի մատնված ողջ մնացածներ... գերեզմանոցներում սարսափելի պատկեր էր... բառերն անզոր են նկարագրելու այդ սոդոմ-գոմորը... ողջ մնացածներին եւ հազարավոր զոհվածներին փլատակների տակից հանող զինվորներն ու կամավորները լացում էին դիակները հողին հանձնելով. մարդկանց թաղում էին եղբայրական գերեզմանոցում, առանց անվան հիշատակման:

*Տես էջ 4*

# «Իրանական գազի գինը կախված է բանակցություններից»

*Ասաց Հայաստանում Իրանի դեսպան Մոհամմադ Ռեյիսին*

**Իրանից գազ գնելու վերաբերյալ Հայաստանի իշխանությունները Իրանի հետ պաշտոնական մակարդակում քննարկումներ չեն ունեցել: Այս մասին երեկ հրավիրված ասուլիսում հայտարարեց Հայաստանում Իրանի դեսպան Մոհամմադ Ռեյիսին: «Իրանը Հայաստանի հետ շատ լավ հարաբերությունների մեջ է, մի քանի տարի է, ինչ երկու երկրների միջեւ գործում է համաձայնագիր, որի շրջանակում երկու երկրները միմյանց հետ բարտերային եղանակով են համագործակցում՝ «գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» սկզբունքով»,- ասաց դեսպանը:**

**Իրանական գազն ավելի մատչելի եւ շահավե՞տ կլինի Հայաստանի համար, քան ռուսականը, հարցին պատասխանելով՝ Մոհամմադ Ռեյիսին նշեց, որ գների տարբերությունների մասին հնարավոր չէ խոսել ենթադրական եղանակով. հստակ դատողություններ հնարավոր կլինի անել միայն պայմանավորվածությունների դեպքում: «Իրանը Թուրքիային գազ է վաճառում միջազգային գործող գներով, սակայն բարեկամ որոշ երկրների համար բացառված չէ, որ զեղչեր կիրառի: Դա կախված է այն համաձայնություններից, որոնք ձեռք կբերվեն»,- ասաց դեսպանը՝ կատակելով, որ թվեր մատնանշել չի ցանկանում, քանի որ այդքան էլ լավ չէ մաթեմատիկայից:**



# Վախճանվեց Նելսոն Մանդելան

Հարավաֆրիկյան Հանրապետության (ՀԱՀ) Յոհաննեսբուրգ քաղաքում գտնվող իր տանը երեկ վախճանվեց այդ երկրի առաջին սեւամորթ նախագահը, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Նելսոն Մանդելան: Նա մահացավ երկարատեւ հիվանդությունից հետո, 95 տարեկան հասակում: Այդ մասին դեկտեմբերի լույս 6-ի գիշերը հայտարարեց պետության ներկայիս ղեկավար Ջեյկոբ Զուման: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ հանրահայտ իրավապաշտպան, ՀԱՀ նախկին նախագահ Մանդելան տառապում էր թոքային վարակից:

Նախագահ Զուման լրատվամիջոցներին հայտնել է, որ Մանդելային հուղարկավորելու են պետական պատիվներով: Նախագահը կարգադրել է ի հիշատակ հանգուցյալ ղեկավարի երկրում խոնարհել դրոշները:



Նելսոն Մանդելան ծնվել է 1918 թ. ՀԱՀ հարավ-արեւելքում: 1943 թվականին նա սկսել է համալսարանում իրավունք ուսումնասիրել, բայց իրավագիտության բակալավրի աստիճան ստացել է միայն 1989-ին՝ իր բանտարկության վերջին ամիսներին, երբ հեռակա սովորում էր Հարավային Աֆրիկայի համալսարանում:

*Տես էջ 5*

# Արտադրվել են առաջին հայկական պլանշետն ու հեռախոսը

## *Հայկական պլանշետների զանգվածային արտադրությունը եւ վաճառքը կսկսվեն 2014-ի հունվար-փետրվարին*

Հայաստանի Հանրապետության վարչապետին կից արդյունաբերական խորհրդի հերթական՝ երեկվա նիստը սկսվել է հայկական արտադրության առաջին պլանշետի (Armtab) եւ առաջին հեռախոսի (Armphone) ներկայացմամբ: Ինչպես տեղեկացանք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, նիստը վարող վարչապետ **Տիգրան Սարգսյանը** տեղեկացրել է, որ Հայաստանի ՏՏ ոլորտում գործող հայ-ամերիկյան «Technology and Science Dynamics Inc/Armtab Technologies» ընկերությունը նախաձեռնել է հայկական առաջին դյուրակիր համակարգիչների՝ պլանշետների արտադրություն Հայաստանում:




Վերոնշյալ ընկերության նախագահ **Վահան Շաքարյանը** տեղեկացրել է, որ արտադրության շրջանակում արդեն կան անդրոիդ համակարգով փորձնական հավաքված պլանշետներ՝ 7,85, 9, 9,7 եւ 10,1 դյույմանոց էկրանով, 3G եւ WiFi հնարավորություններով, ինչպես նաեւ առաջին հայկական հեռախոսը՝ Արմֆոն (Armphone): Նա նշել է, որ որակի առումով պլանշետները ոչնչով չեն զիջում համաշխարհային հայտնի արտադրանքներին, իսկ արժեքը վերջիններիս գնի համեմատ կլինի էականորեն ցածր: Պլանշետների ծրագրային եւ սարքային ապահովման (software եւ hardware) դիզայնն իրականացվում է Հայաստանում, իսկ հավաքումը՝ ԱՄՆ-ում եւ Հոնկոնգում: Նախատեսվում է հայկական պլանշետների զանգվածային արտադրությունը եւ վաճառքն սկսել 2014-ի հունվար-փետրվար ամիսներին՝ արտադրությունում ներգրավելով 25-50 բարձրակարգ հայաստանյան մասնագետների: Վահան Շաքարյանը վարչապետին է նվիրել հայկական արտադրության առաջին պլանշետը:

Արդյունաբերական խորհրդի քննարկմանն է ներկայացվել նաեւ «Հայաստանի տեքստիլ եւ տրիկոտաժի ոլորտի զարգացման ռազմավարությունը», «Հայաստանում կոշիկի արտադրության զարգացման ռազմավարությունը» եւ դրանց իրականացումն ապահովող «Թեթեւ արդյունաբերության ոլորտի 2014-2016 թթ. գործողությունների ծրագիրը», հաստատվել են «Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի 2012-2015 թթ. գործողությունների ծրագրում» կատարված փոփոխությունները:

Ա. Ս.

# Ավելանում են Երեւանի տրանսպորտային երթուղիներից հրաժարվողները

Երեւանի տրանսպորտային երթուղիները սպասարկող ընկերությունները գործադուլ կանեն եւ ուղեւորներին չեն փոխադրի, եթե Երեւանի քաղաքապետարանը չբարձրացնի երթեւեկության սակագինը: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ասաց Հայաստանի փոխադրողների միության նախագահ Հրանտ Եղիազարյանը: Փոխադրող կազմակերպություններն առաջարկում են սահմանել 150 դրամ ուղեւորավճար, իսկ 50 դրամ լրավճարը տրամադրվի պետության կողմից, քանի որ իրենց հաշվարկներով՝ տրանսպորտի սակագինը պետք է լինի 200 դրամ:

Փոխադրողների միության նախագահն իր դժգոհությունը հայտնեց Երեւանի քաղաքապետարանից, քանի որ վերջինս խոստացել էր մինչեւ տարեվերջ իրենց պատասխան տալ, թե որքան է լինելու ուղեվարձը, մինչդեռ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը ընդամենը երկու նիստ է գումարել: Իրենց նամակին ի պատասխան, ըստ Հրանտ Եղիազարյանի, քաղաքապետարանից հայտնել են, որ դեկտեմբերին կլինի երրորդ նիստը, որի ժամանակ տրանսպորտային ծախսերը կհամադրվեն ուղեւորահոսքերի հետ եւ կորոշվի ուղեվարձը:

«Այսպես շարունակել հնարավոր չէ: Փոխադրող կազմակերպությունները վնասով են աշխատում», նշեց փոխադրողների միության նախագահը, որպես ապացույց հայտնելով, որ փոխադրող կազմակերպություններից մեկը հրաժարվել է իր երկու՝ թ. 4 եւ թ. 17 ավտոբուսային երթուղիներից, իսկ 7 եւ 17 միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող ընկերություններն էլ իրենց աշխատանքները դադարեցնելու հայտ են ներկայացրել: Այս տարվա ընթացքում էլ 23 երթուղիներ արդեն դադարել են աշխատել: «Եթե տրանսպորտի գինը չբարձրանա, մյուս բոլոր երթուղիները եւս կհրաժարվեն ուղեւորափոխադրումներ կատարելուց: Ոչ ոքի համար ներկայումս ձեռնտու չէ աշխատել նման պայմաններում՝ դանակը հասել է ոսկորին», ասաց Հրանտ Եղիազարյանը:

Միեւնույն ժամանակ, տրանսպորտի սակագնի բարձրացման դեպքում ուղեւորափոխադրողները խոստանում են զիջումների գնալ սոցիալական տարբեր խմբերի համար: «Հնարավոր է ուսանողների, սոցիալապես անապահովների կամ այլ սոցիալական խմբերի համար սահմանել աբոնեմենտ, որով նրանք մեկ ամսական երթուղով կերթեւեկեն 100 դրամով», տեղեկացրեց փոխադրողների միության ղեկավարը: Նա նաեւ խոստացավ, որ Նոր տարուն ժողովրդին առանց տրանսպորտի չեն թողնի:

Ա. Ս.

# Շահագործման է հանձնվել Ուլնեցի եւ Ռուբինյանց փողոցները միացնող նոր ճանապարհը

Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, ամբողջությամբ ավարտվել է 2012 թվականի մայիսին սկսված Ուլնեցի եւ Ռուբինյանց փողոցները միմյանց կապող 2,6 կմ ընդհանուր երկարությամբ նոր ավտոճանապարհի շինարարությունը: Ճանապարհի երթեւեկելի մասի լայնությունը 9 մ է, երկու կողմերից հետիոտնային մայթերի լայնությունը՝ 1,5 մ:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի այս հատվածում, «Ալմաս» գործարանին հարող նախկին երկաթգծի կամրջի վերակառուցմամբ ստեղծվել է տրանսպորտային նոր հանգույց: Կամրջի երկարությունը 66 մ է, երթեւեկելի մասի լայնությունը՝ 7,5 մ: Կամրջի երկու կողմերում մեկական մետր լայնությամբ մայթեր են: Կառուցվել են նաեւ նոր ճանապարհը Ռուբինյանց փողոցին կապող, 290 գծմ ընդհանուր երկարությամբ մոտեցման երկու ուղիներ, 230 գծմ ընդհանուր երկարությամբ երկաթբետոնյա միաձույլ հենապատեր, մոնտաժվել են անվտանգության նոր բազրիքներ, բնակչության մոտեցման եւ անցումների համար՝ նոր աստիճանավանդակներ:

Ճանապարհի ամբողջ երկայնքով կառուցվել է 2210 գծմ կենցաղային կոյուղատար նոր համակարգ, ինչպես նաեւ 2040 գծմ երկարությամբ հեղեղատար նոր կոյուղագիծ, վերատեղադրվել է 680 մ երկարությամբ գազատարը: Ճանապարհային նոր հանգույցն ապահովված է արտաքին լուսավորության նոր ցանցով. տեղադրվել է 172 լուսատուներով 86 հենասյուն:

Ճանապարհը նշագծվել է, տեղադրվել են ճանապարհային երթեւեկության համապատասխան նշաններ: Շինարարության ավարտին ամբողջությամբ մաքրվել եւ բարեկարգվել են ճանապարհի հարակից տարածքները:

Տեղեկացնենք նաեւ, որ ավարտին է մոտենում Լենինգրադյան փողոցն ու Իսակովի պողոտան միմյանց կապող մայրուղին, որը, սակայն, նախատեսված էր ավարտել դեռեւս այս տարվա փետրվարին:

Ա. Ս.

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

# Ժամանակավրեպություն եւ կեղծիք

«Ազգ» օրաթերթի նոյեմբերի 28-ի համարում հրապարակված «Ամեն մարդ մի քիչ ճարտարագետ պետք է լինի» հոդվածից ստացած առաջին տպավորությունը դրա ժամանակավրեպ լինելն էր. հոդվածագրի (Արմենուհի Դեմիրճյան) ինչի՞ն է պետք եղել ջուր պղտորել այն ժամանակ, երբ Վանաձորի երկու՝ պետական մանկավարժական ինստիտուտի եւ ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի (պոլիտեխնիկ) միավորմամբ համալսարան կազմավորելու խնդիրը հրապարակումից օրեր առաջ արդեն իսկ հանգուցալուծված էր. մասնավորապես արդեն հայտնի էր, որ Վանաձորում համալսարան կհիմնվի, սակայն ոչ այդ երկու բուհերի միավորմամբ: Չափազանցության ոլորտից են հոդվածագրի որոշ բնութագրումները, ըստ որոնց՝ «Վանաձորը մեծ ալեկոծումների մեջ է հայտնվել», «Մանկավարժական եւ ճարտարագիտական բուհերը միավորելու անակնկալ լուրը ափերից հանել է ողջ քաղաքը» եւ այլն: Հոդվածագիրը, վանաձորաբնակ չլինելով, մեղմ ասած, չափազանցրել է: Նախ՝ որ խոսում է ներկա ժամանակով, մինչդեռ «ալեկոծվողները», ինչպես արդեն նշեցինք, ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի մի քանի տասնյակ ուսանողներ ու աշխատակիցներն էին, որոնք հոդվածի հրապարակումից օրեր առաջ արդեն հանդարտված էին մի պարզ պատճառով. «ալեկոծման» համար այլեւս առիթ ու պատճառ չկար: Ինչ վերաբերում է նոյեմբերի 13-ի «հանրահավաքին», ապա այն ընդամենը եղել է բողոքի փոքրիկ ցույց՝ չգիտես ինչու կազմակերպված Լոռու մարզպետարանի դիմաց, թեպետ, ըստ հոդվածի տրամաբանության եւ հոդվածագրի տրամադրության, կարծես պետք է կազմակերպված լիներ մանկավարժական ինստիտուտի դիմաց:

Մենք հոդվածագրի անկողմնակալությունը եւ բոլորովին անտեղի պաթետիզմը կասկածի տակ ենք դնում ոչ թե այն պատճառով, որ նա, Երեւանից հասնելով Վանաձոր, իրադարձությունների ընդհանուր համատեքստից դուրս մեկ-երկու ավելորդ դիտարկում է արել, մեկ-երկու մարդու կարծիք է արձանագրել, այլ այն պատճառով, որ նա զարմանալիորեն մոռացել է լսել նաեւ «հակառակ» կողմին՝ պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողներին կամ աշխատակիցներին, առավել եւս՝ այդ բուհի ռեկտորին: Իսկ հանդիպելը միանգամայն օգտակար կլիներ հոդվածագրին, որովհետեւ այդ դեպքում նա դյուրությամբ կպարզեր, որ մանկավարժականցիները բնավ էլ «գյուղը չեն գցել» հիշյալ մասնաճյուղի հետ միավորվելու համար, քանի որ այդ դեպքում մասնաճյուղն ուղղակի բեռ կդառնար մանկավարժականի ուսերին՝ հավելյալ կերպով ծագեցնելով լրացուցիչ խնդիրներ:

Հոդվածում քանիցս իր բանասիրական կրթությունը մատնանշող հեղինակը, չգիտես ինչու, այնքան անփույթ է այլոց աշխատանքը բնութագրելիս, որ նրա գրիչը շատ հեշտ գրում է. «Չէի ցանկանա թեթեւ կրթությամբ շեղել տարիների ձեռքբերումներս»: Այս խոսքն իբր ՀՊՃՀ ուսանող է ասում, բայց եթե նույնիսկ դա այդպես է, ապա ու՞ր մնաց բանասերի եւ մանավանդ լրագրողի պարկեշտ գրիչը՝ այդպիսի որակում թույլ չտալու ո՛չ պետական մանկավարժական ինստիտուտի, որտեղ, ի դեպ, ճակատագրի բերումով մեկ-երկու տարի աշխատել է նաեւ հոդվածագիրն ինքը, ո՛չ էլ, առավել եւս, դեռեւս անգո համալսարանի հասցեին:

Իբրեւ վերջաբան հավաստիացնենք «ալեկոծ» այս խնդրի մասին հուզաթաթավ ակնարկ գրած հեղինակին, որ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում բոլորովին ուրախ չէին եւ չեն ՀՊՃՀ մասնաճյուղի հետ միավորվելու հեռանկարից: Եվ փառք Աստծո:

ՀԳ.: Հոդվածագրի նախընտրած ժանրը՝ ակնարկը, որոշակի յուրօրինակություններով հանդերձ ենթադրում էր փաստերի լիակատար վավերականություն, ինչը նույնպես չի ապահովվել: Խոսքը մասնավորապես վերաբերում է ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի՝ այդ քաղաքում իբր թե առաջին բուհը լինելու «փաստին». վերջինս բացվելու օրվանից (չենք ասում՝ հիմնադրվելու) միշտ ունեցել է սոսկ մասնաճյուղի, սակայն երբեք առանձին բուհի կարգավիճակ:

**ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի լրատվության բաժնի աշխատակից**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ծնունդների խրախուսման նոր համակարգ Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս աշխարհի բազմաթիվ երկրների, գտնվում է ժողովրդագրական երկրորդ անցման փուլում, որը, հանդիսանալով պատմական գործընթաց, բնութագրվում է նաեւ ավանդական վերարտադրողական վարքի փոփոխությամբ, երբ «բարձր ծնելիություն-բարձր մահացություն» մոդելը փոխակերպվում է «ցածր ծնելիություն-ցածր մահացություն» մոդելով: Մեր երկրի դեպքում բնակչության վերարտադրողական վարքագծի վրա ազդեցություն ունեցան նաեւ սոցիալ-քաղաքական հայտնի իրադարձությունները եւ դրանցով պայմանավորված զանգվածային միգրացիոն հոսքերը: Վերոնշյալ գործոնների ազդեցությամբ ծնելիության եւ մահացության ցուցանիշների միջեւ ձեւավորվեց նոր հարաբերակցություն:

Ժողովրդագրական ներկա անցումը բերեց նրան, որ առաջիկա տասնամյակների ընթացքում հնարավոր չէ վերադառնալ բնակչության տարիքասեռային այն կառուցվածքին եւ ծնունդների այն թվաքանակին, որը հանրապետությունում առկա են եղել 1980-ական թվականներին: Սակայն մեղմել դրանց ազդեցությունը, բավարար նախադրյալներ ստեղծելով ժողովրդագրական հետագա զարգացման համար, հնարավոր է եւ անհրաժեշտ:

Ժողովրդագրական խնդիրների բարդությամբ եւ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով պայմանավորված, յուրաքանչյուր երկիր յուրովի է դիմակայում մարտահրավերներին: Հայաստանի Հանրապետությունում այդ մարտահրավերներին արձագանքելու, ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակով ներկայումս իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնք, փոխլրացնելով միմյանց, նպատակ ունեն աջակցել երեխա ունեցող ընտանիքներին: Նշված միջոցառումները վերաբերում են ծննդօգնության ծառայությունների որակի ու մատչելիության ապահովմանը, մինչեւ 7 տարեկան երեխաների անվճար բուժսպասարկման կազմակերպմանը, երեխաների ծննդյան եւ խնամքի նպաստի տրամադրմանը եւ այլն: Մասնավորապես, կարեւորելով բնակչության պարզ վերարտադրության ապահովումը եւ ընդլայնված վերարտադրության համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը՝ պետությունը տարբերակված մոտեցում է ցուցաբերում՝ ըստ ընտանիքում ծնված երեխաների հաջորդականության: Այսպես ընտանիքում ծնված երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար տրամադրվում է ծննդյան նպաստ, որը կազմում է 430 հազ. դրամ:

Հաշվի առնելով ծնունդների խրախուսման նոր մոտեցումների անհրաժեշտությունը՝ կարեւորվում է էապես նոր ծրագրերի ներդրումը, ծրագրեր, որոնք կարող են հանդիսանալ ընտանիքների զարգացման երկարաժամկետ գրավական եւ երաշխավոր:

2014 թվականի հունվարի 1-ից, համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N 39 արձանագրային որոշման, Հայաստանի Հանրապետությունում երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար կներդրվի պետական աջակցության նոր ծրագիր: Նախ, երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը 430 հազ. դրամից կաճի՝ հասնելով 500 հազ. դրամի:

Բացի դրանից՝ երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքը կստանա պետական աջակցության իրավունք:

Երեք եւ ավելի երեխա ունեցող ընտանիքներին պետական աջակցությունը երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքին անկանխիկ եղանակով տրամադրվող ֆինանսական միջոցներ են՝ ընտանեկան դրամագլխի ձեւով:

**Ընտանեկան դրամագլուխը (կապիտալ)՝** պետական աջակցության շրջանակներում, երեք եւ ավելի երեխա ունեցող ընտանիքներին անկանխիկ եղանակով տրամադրվող ֆինանսական միջոցներ են, որոնք փոխանցվելու են պետական աջակցության հաշվին, որոնք ժամանակի ընթացքում կարող են աճել օրենքով չարգելված այլ աղբյուրներից պետական աջակցության հաշվին փոխանցվող ֆինանսական միջոցների, ինչպես նաեւ դրանց վրա հաշվարկված եւ չպահանջված տոկոսների շնորհիվ:

2014 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո Հայաստանի Հանրապետությունում ընտանիքում երրորդ եւ չորրորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանեկան դրամագլխի չափը կկազմի 500 հազ. դրամ, հինգերորդ եւ հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 մլն դրամ՝ համաձայն ստորեւ տրված աղյուսակի:

| | Ընտանեկան դրամագլխի չափը, (ՀՀ դրամ) |
|---|---|
| երրորդ եւ չորրորդ երեխայի ծննդյան դեպքում | 500.000 |
| հինգերորդ եւ հաջորդ երեխայի ծննդյան դեպքում | 1.000.000 |

Ընտանեկան դրամագլուխը տնօրինվելու է պետական աջակցության տնօրինողի՝ ընտանիքում ծնված երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի հոր եւ (կամ) մոր, կամ երեխաների օրինական այլ ներկայացուցչի կողմից,

Ընտանեկան դրամագլուխը կարող է տնօրինվել ոչ միայն այն երեխայի համար, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, այլեւ պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի մյուս անդամների համար: Ընտանեկան դրամագլուխը, մինչեւ այն երեխայի չափահաս դառնալը, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, պետական աջակցության տնօրինողի կողմից կարող է օգտագործվել միայն անկանխիկ եղանակով՝ ըստ ուղղությունների. Ընտանեկան դրամագլխի տնօրինման ուղղությունների ընտրության ժամանակ հաշվի են առնվել տարբեր տարիներին հանրապետությունում իրականացված ընտրանքային հետազոտությունների արդյունքները, որոնց համաձայն, ընդլայնված վերարտադրության ապահովելու համար ընտանիքների գերակշռող մեծամասնությունը, անկախ ընտանիքի տիպից եւ բնակության վայրից, ի թիվս այլ խնդիրների, պետությունից ակնկալում է աջակցություն բնակարանային պայմանների բարելավման, առողջապահական եւ կրթական վճարովի ծառայությունների մատչելիության ապահովման հարցերում: Նշված խնդիրները պայմանավորել են ընտանեկան դրամագլխի օգտագործման ուղղությունները, որոնք հետեւյալն են.

1) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի (կամ այդ ընտանիքի անդամի) համար նոր բնակարանի գնման, կառուցման համար կամ բնակարանի ձեռք բերման նպատակով տրամադրված եւ հիփոթեքով ապահովված վարկի տոկոսադրույքների եւ մայր գումարի մարման,

2) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի անդամի՝ ուսումնական (ուսումնադաստիարակչական) հաստատություններում ուսումնառելու ընթացքում ուսման վարձավճարի վճարման,

3) պետական աջակցության իրավունք ստացած ընտանիքի անդամի՝ բժշկական օգնության դիմաց վճարման եւ (կամ) առողջության ապահովագրության դասով ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների ապահովագրության նպատակով ապահովագրավճարի վճարման:

Նշված ուղղություններից օգտվելու առաջնահերթությունը որոշվելու է պետական աջակցության տնօրինողի կողմից:

Ընտանեկան դրամագլխի վրա հաշվեգրվելու են տոկոսներ, որոնք պետական աջակցության տնօրինողի կողմից կարող է օգտագործվել կանխիկ կերպով:

Ընտանեկան դրամագլուխն իր ողջ ծավալով, ներառյալ դրան հաշվեգրված եւ չպահանջված տոկոսներով, կանխիկ կերպով կարող է օգտագործվել միայն այն երեխայի չափահաս դառնալուց հետո, որի ծնունդով պայմանավորված, ծագել է պետական աջակցության իրավունքը, առանց սահմանափակումների:

Ըստ էության, առաջարկվում է ծնունդների խրախուսման որակապես նոր համակարգ, երբ, ընտանիքում ծնված երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնունդով պայմանավորված, պետական աջակցությունը հնարավորություն է տալիս ոչ միայն հոգալ ընտանիքի առաջնահերթ կարիքների մի մասը, այլեւ ժամանակի ընթացքում ծնողների շրջանում էլ ավելի ամրապնդել իրենց երեխայի ապագայի նկատմամբ վստահությունը:

Բնականաբար, առանձին վերցրած մեկ ծրագրի շրջանակներում հնարավոր չէ համապարփակ լուծում առաջարկել երեք եւ ավելի երեխա ունեցող ընտանիքների սոցիալական հիմնախնդիրներին: Հանրապետության սոցիալ-տնտեսական հետագա զարգացման եւ բնակչության կենսամակարդակի բարելավման համատեքստում հարկավոր է շեշտը դնել հատկապես այն ուղղությունների վրա, որոնք կարող են առավելագույնս ազդել ամուսնական զույգերի վերարտադրողական վարքագծի վրա: Ուստի, երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան պետական աջակցության նոր ծրագրի իրականացումից նախ եւ առաջ ակնկալվում են տարեկան ծնունդների հաշվեկշռում երրորդ եւ հաջորդ երեխաների ծնունդների տեսակարար կշռի ավելացումը եւ ընտանիքների այդ տիպին տրվող պետական աջակցության արդյունավետության եւ հասցեականության բարձրացումը:

## Չեխերեն լույս է տեսել Միքայել (Մայքլ) Բոբելյանի «Հայաստանի երեխաները» գիրքը՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը

**Պրահա – Չեխիայի «Պասեկա» հրատարակչությունը լույս է ընծայել ամերիկահայ գրող Միքայել (Մայքլ) Բոբելյանի «Հայաստանի երեխաները» գիրքը՝ «Մոռացված ցեղասպանություն կամ հարյուրամյա պայքար արդարության համար» վերտառությամբ գիրքը:**

**Հրատարակչությունը նշում է, որ 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում միլիոնավոր հայեր սպանվել կամ քշվել են անապատները: Դեռեւս ԱՄՆ նախկին նախագահ Վուդրո Վիլսոնը, որ անցյալ դարի քսանական թվականներին համաշխարհային շարժում էր սկսել, որպեսզի ցեղասպանության հանցագործությունը պատժվի, այդպես էլ որեւէ արդյունքի չհասավ:**




**Հեղինակն ուսումնասիրել է ցեղասպանության ճանաչման գործընթացը, եւ բարձրացրել մի շարք մտահոգիչ հարցեր: Մասնավորապես թե ինչո՞ւ մինչեւ հիմա չի ճանաչվել Հայոց ցեղասպանությունը, ի՞նչ դեր է ունեցել այս հարցում ԱՄՆ-ը, կամ նրա շահերը, Թուրքիան որքանո՞վ է պատրաստ պատմական ճշմարտությունը նեկայացնելուն: Ինչպե՞ս է ձեւավորվել Հայաստանի անկախ հանրապետությունը, ի՞նչ աշխատանքներ են կատարվում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Շատ փաստեր հեղինակը ներկայացնում է առաջին անգամ: Գիրքն ունի 320 էջ եւ վաճառվում է paseka.cz կայքէջի միջոցով: Գրքի տպաքանակը սահմանափակ է:**

**Տպագրությանն աջակցել է նաեւ Հայաստանի մշակույթի նախարարությունը:**

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

## Գերագույն դատարանի շենքը՝ Ջորջ Դոյքմեջյանի անունով



«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 30-ի համարում տպագրված Հարութ Սասունյանի հոդվածից տեղեկանում ենք, որ Լոնգ Բիչում (Կալիֆոռնիա) Գերագույն դատարանի նորակառույց մի շենք այսուհետեւ կրելու է Ջորջ Դոյքմեջյանի անունը: 339 միլիոն դոլար արժողությամբ դատական համալիրի պաշտոնական բացումը կատարվել է նոյեմբերի 21-ին:

Ջորջ Դոյքմեջյանը 28 տարի պաշտոնով ծառայել է Կալիֆոռնիա նահանգին: 1982-ին դժվարությամբ ընտրվելով կառավարիչ, 1986-ին նա վերընտրվել է ջախջախիչ հաղթանակ տանելով իր հակառակորդի նկատմամբ: Դրանից առաջ՝ 1973-83 տարիներին նա գլխավոր դատախազ էր եղել, իսկ 1967-ից 1979 թթ.՝ նահանգային սենատոր եւ Սենատում մեծամասնական խմբավորման առաջնորդ՝ 1969-ին:

1988-ին նա փոխնախագահի հավանական թեկնածու է եղել, բայց նախընտրել է չմասնակցել ընտրարշավին:

Հինգհարյուրից ավելի կառավարական պաշտոնյաներ ներկա են եղել դատական շենքի բացման արարողությանը եւ շնորհավորել նախկին կառավարչին:

Հ. Ծ.

## 25 տարի

# Ինձ համար ցավալի է, որ աղետի գոտում 4030 անօթեւան ընտանիք կա դեռեւս

*1-ին էջից*

Հե՞շտ է ասել՝ 25 հազար զոհ: Սարսափելի մի պատկեր հիշողությունիցս երբեւէ ջնջել չի լինի. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, ԽՍՀՄ պետմատի նախագահ Լեւ Վորոնինի հետ Լենինական մտնելիս ականատես եղանք, թե ինչպես 10-14 տարեկան երեք անչափահաս երեխա միայնակ «Ժիգուլի» ավտոմեքենայով իրենց ծնողների երեք դագաղներն էին տանում գերեզմանոց, փորձելով մեքենայի տանիքին մի կերպ պահել դրանք:

**- Ինչպե՞ս ընդունեցիք երկրաշարժի լուրը: Ինչպե՞ս հաջողվեց կազմակերպչական հսկայածավալ աշխատանքներ իրականացնել:**

- Երկրաշարժի մասին լուրն իմանալուց րոպեներ անց Մինիստրների խորհրդում՝ Ֆադեյ Սարգսյանի մոտ էինք. շուտով պարզ դարձավ, որ Հայաստանի ողջ



*Օպերատիվ արձագանքման շտաբի նիստում՝ Ֆադեյ Սարգսյան, Լեւ Վորոնին, Սաբիր Ստեփանյան*

հյուսիսը վերածվել է աղետի գոտու, որ կան տասնյակհազարավոր զոհեր: Հայաստան ժամանեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովը. քաղբյուրոն կազմավորեց հատուկ հանձնաժողով նրա ղեկավարությամբ, որի կազմում էին իր տեղակալներ Բատալինը, Սիլաեւը, Վորոնինը, ՀԽՍՀ կոմկուսի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը, միութենական նախարարներ, կենտկոմի եւ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի այլ պատասխանատու անձինք: Հայաստանի պետական մատակարարումների կոմիտեից հանձնաժողովի կազմում ընդգրկվել էի նաեւ ես: Եվ այդ մարդիկ երկու ամիս չհեռացան Հայաստանից, աշխատելով առանց հանգստի: Մինիստրների խորհրդում Ֆադեյ Սարգսյանի ղեկավարությամբ ձեւավորվեց օպերատիվ արձագանքման շտաբ. տեղում աշխատանքների կազմակերպման նպատակով շտաբներ ձեւավորվեցին նաեւ Սպիտակում, Լենինականում եւ Կիրովականում: Ողբերգության հենց առաջին օրից գործի դրվեց ԽՍՀՄ պետմատի ողջ հզոր համակարգը. տարածքային բոլոր ենթակառույցները ուղղորդվեցին օգնելու Հայաստանին: Եթե սովորական ժամանակներում մեր երկիր օրական 400-500 վագոն էր մտնում, ապա այդ օրերին դրանց թիվը հասնում էր 2,5 հազարի, որոնք Հայաստան էին բերում սնունդ, հագուստ, տնակներ, վրաններ, սարքավորումներ, տեխնիկա: Օգնությունը միայն նյութական չէր. վերականգնվեց շինարարական ինդուստրիան՝ ստեղծվեցին արտադրական շինանյութերի ձեռնարկություններ, գործարկվեց Արարատի ցեմենտի գործարանի երկրորդ հերթափոխը: Ստացված օգնության արդյունավետ օգտագործման եւ նպատակային բաշխման կազմակերպումը լուրջ հիմնախնդիր էր: Հանրապետության պետական մատակարարման կոմիտեն կարճ ժամանակահատվածում Ախուրյանում կառուցեց Եվրոպայի խոշորագույն պահեստային բազաներից մեկը, միաժամանակ առկա շինություններից բազաներ վերաձեւավորելով նաեւ Երեւանում, Մասիսում, Կիրովականում:



*Կենտրոնում՝ Նիկոլայ Ռիժկովը եւ պաշտպանության նախարար Յազովը*

**- Պարոն Ստեփանյան, Ձեզ ճանաչողները համարում են, որ ողբերգական այդ օրերի կիզակետում լինելով՝ ամեն ինչ մանրամասնորեն հիշում եք...**

- Գուցե մի քիչ չափազանցված է, բայց ողբերգության ամբողջական պատկերը կինոժապավենի նման դրոշմվել է հիշողությանս մեջ: Դրանք դրվագներ են, որոնք շատ հաճախ արձանագրային կամ տարեգրային գրառումներում չեն հիշատակվում, մինչդեռ ներկայացնում են այդ օրերի իրական պատկերը, տիրող մթնոլորտը, առանձին անհատների անձնուրաց արարքները, համամարդկային մեծ աջակցությունն ու կարեկցանքը, որ առաջադեմ մարդկությունը ցուցաբերեց հայ ժողովրդի հանդեպ: Հիշում եմ, երբ դեկտեմբերի 8-ին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ռիժկովի հետ Լենինական ժամանեցինք, մեզ դիմավորող՝ Լենինականի քաղկոմի նախագահ Միսակ Մկրտչյանի մազերը մեկ օրվա մեջ ամբողջովին սպիտակել էին. նա կորցրել էր մորն ու մինուճար որդուն: Այդ ժամանակ մեզ մոտեցավ մի երիտասարդ եւ Մկրտչյանին հանձնեց փողերով լի կարմիր պարկ, ասելով, որ փլատակների մեջ է գտել: Բոլորս հուզմունքից կարկամել էինք: Մկրտչյանը ամուր գրկեց երիտասարդին եւ հարազատավարի սեղմեց կրծքին:

Հայաստանին օգնության կոչին արձագանքեցին նաեւ արտերկրից. ակտիվ դերակատարություն ունեցավ նաեւ հայկական սփյուռքը: Անգլիայի հայկական համայնքը բավականին խոշոր՝ 2,5 մլն ֆունտ ստեռլինգ օգնություն էր հավաքել: Հիշում եմ, երկար քննարկումներ էին ընթանում այդ գումարի նպատակային օգտագործման հարցի շուրջ: Որպես Հայաստանի կառավարության ներկայացուցիչ՝ գտնվելով Անգլիայում, առաջարկեցի Վանաձորում այդ գումարով մանկական հիվանդանոց կառուցել: Այդպես էլ արվեց, եւ հիվանդանոցը մինչ օրս գործում է:

Գերմանիան 120-տոննանոց 18 ավտոկռունկ ուղարկեց, որոնց տեղ հասնելուն պես փրկարարական աշխատանքներում իսկական բեկում մտցվեց: «Կամազները» ու ինքնաթափերը ստանում էինք Թաթարստանից, «Կրազները»՝ Ուկրաինայից: Հիշում եմ Մաստարայի, Մասիսի երկաթգծի կայարաններում որպես օգնություն ստացված մեքենաների շարասյունից հսկայական խցանում էր առաջացել: Եվ դրանց տեղափոխումը, վերաբաշխումը իրականացվում էր օրնիբուն, անքուն գիշերներ անցկացնելով, որպեսզի հաջորդ շարակազմերի համար երկաթուղին բաց լինի: Մեկ ուրիշ հիշարժան դրվագ՝ աղետյալներից մեկի վերջույթների ցրտահարություն նկատելով, Ն. Ռիժկովը իմ ներկայությամբ զանգահարեց Խաբարովսկ եւ կարգադրեց վալենկաներ ուղարկել: Հնարավորինս կարճ ժամկետում դրանցից Հայաստան ուղարկվեց 10 հազար զույգ: Ղազախստանից 2600 յուրտ ստացանք: Եվ առհասարակ 1989 թվականի ընթացքում պետմատը աղետի գոտի է ուղարկել 483 էքսկավատոր, 417 բուլդոզեր, 335 ավտոկռունկ, 302 բեռնատար բետոնահարիչ, 2005 ինքնաթափ, 1475 բեռնատար, 265 ավտոկցորդ (ֆուրգոն) եւ ավտոխանութ, 567 ավտոբուս, 675 մարդատար մեքենա, 384 շինարարական բեռնափոխադրիչ, 463 կոմունալ եւ հատուկ մեքենաներ, 170 հորատող հաստոցներ եւ սարքավորումներ... 1989թ. ապրիլի 27-ի նիստում հանձնաժողովը հաստատեց, որ աղետի հետեւանքով տուժել են 300 մանկապարտեզ՝ 33 հազար տեղով, 450 հանրակրթական դպրոց՝ սովորողների 210 հազար տեղով, լիովին քանդվել՝ 150 մանկապարտեզ 14 հազար տեղով եւ 220 դպրոց՝ 93 հազար տեղով... Բոլորը հիմա թվարկել հնարավոր չէ, այս մասին մանրամասնորեն շարադրված է իմ «Կյանքը, աշխատանքը, մարդիկ» ինքնակենսագրական գրքում:

Թվերը՝ թվեր, բայց առավել խոսուն են մարդկային ջերմ արարքները: Այսպես, Լոնդոնում իմ հոգին անսահման ջերմությամբ տոգորվեց բրիտանացի մի կնոջ արարքից, ով իր ամուսնական մատանին էր ծրարի մեջ բերել եւ խնդրում էր, որ դրա վաճառքից ստացած գումարը ուղղել աղետի գոտու հիմնախնդիրների վերացմանը: Վերհիշելու շատ բան կա. բարձր գնահատանքի է արժանի «Աերոֆլոտի» աշխատակիցների գործունեությունը, ովքեր օպերատիվ կազմակերպեցին վիրավորների տարհանումը, բժիշկների՝ որոնց բարձր պրոֆեսիոնալիզմի շնորհիվ հնարավոր եղավ խուսափել համաճարակային իրավիճակներից: Այդ օրերին փրկարարների, տարբեր մասնագետների կողքին հարակից գյուղերի բնակիչներն էին, կամավորները, որոնք անքուն գիշերներ անցկացնելով, ամեն ինչ արեցին, մինչեւ փլատակների տակից վերջին ողջ մնացածին հանելը:

**- Ինչպե՞ս եք գնահատում աղետի գոտու վերականգնման աշխատանքները:**

- Աղետի առաջին տարում ստացված օգնությունը հսկայական էր, եւ իսկապես, մի քանի տարում աղետի գոտու վերականգնման սահմանված ժամկետն էլ՝ բավարար: Սակայն, որոշ հանգամանքների բերումով, եւ առաջին հերթին՝ քաղաքական, վերականգնման աշխատանքները դանդաղեցին, իսկ շատ չանցած՝ իսպառ դադարեցին: Այդ ժամանակվա իշխանությունը մի տխրահռչակ կարգախոս որդեգրեց՝ «մեր տունը մեր ուժերով կառուցենք», երբ ԽՍՀՄ տարբեր անկյուններից ժամանած շինարարները պատրաստ էին շարունակել աշխատանքները, օգնել վերականգնելու մեր երկիրը: Բայց ստիպված սկսած գործը անավարտ թողեցին ու հեռացան: Ցավալի էր կորցնել արդեն իսկ ձեւավորված շինարարական հսկայական բազան, առավել եւս՝ մարդկային մեծ էնտուզիազմն ու եռանդը, երկիրը արագորեն ոտքի կանգնեցնելու ձգտումը: Իհարկե, կային նաեւ օբյեկտիվ հանգամանքներ՝ ԽՍՀՄ փլուզումը, Հայաստանի շրջափակումը...

1992 թվականին Մոսկվայում հանդիպեցի Սիլաեւին: Նա անհանգստացած էր ֆինանսական մատակարարումների կրճատմամբ, եւ արդարացիորեն խոստովանեց, որ իրենց վիճակն էլ ծանր է: Այնուամենայնիվ նա ինձ ձեռնունայն չթողեց եւ աղետի գոտու գյուղական շինարարության ֆինանսավորման համար վարկ տրամադրեց, որն ամբողջությամբ ուղղվեց գյուղական դպրոցաշինությանն ու մշակութային օջախների վերականգնմանը: Դա պետմատում իմ պաշտոնավարման վերջին տարին էր...

Աղետի գոտու շինարարական աշխատանքները միայն 2000 թվականից հետո հնարավոր եղավ վերսկսել: Այս ընթացքում զգալի աշխատանքներ են արվել, անօթեւան մնացած բազմաթիվ մարդիկ ապահովվել են բնակարանով: Նկատելի է, որ կառավարությունը հնարավորն անում է աղետի հետեւանքների վերացման ուղղությամբ: Բայց ինձ ցավ է պատճառում, որ երկրաշարժից 25 տարի անց դեռեւս 4030 ընտանիք ապահովված չէ բնակարանով: Սա ահազանգ է բոլորիս:

# Մոսկվան մերժեց ռուս դիվանագետներին ներկայացված մեղադրանքը

*Գործ հարուցվեց ԱՄՆ-ում ռուսաստանցի երեխաների վաճառքի վերաբերյալ*



ՌԴ արտգործնախարարությունը մերժել է ԱՄՆ դատախազությունում դեկտեմբերի 5-ին ռուսաստանցի տասնյակ դիվանագետների դեմ առաջ քաշված խարդախության մեղադրանքը: Համապատասխան հայտարարությամբ ուրբաթ օրը հանդես է եկել ՌԴ փոխարտգործնախարար Սերգեյ Ռյաբկովը:

Փոխնախարարի կարծիքով, մեղադրանքները հիմնվում են ռուսաստանցի դիվանագետների հաշիվների անօրինական լրտեսման ընթացքում ստացված տվյալների վրա: «Դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված եւ ծառայողական անձնագրեր ունեցող մարդկանց նկատմամբ նմանօրինակ հնարքների կիրառումը հակասում է միջազգային իրավունքի բոլոր նորմերին եւ այդ ասպարեզում գործող փոխհամաձայնեցված նորմերին», հայտարարել է Ռյաբկովը, որի խոսքը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

ԱՄՆ դատախազությունը դեկտեմբերի 5-ին 49 ռուսաստանցիների մեղադրել էր արտոնյալ բուժսպասարկում ստանալու նպատակով խարդախության դիմած լինելու մեջ: Ամբաստանյալներից 25-ը Նյու Յորքում Ռուսաստանի զանազան ներկայացուցչությունների նախկին կամ ներկայիս աշխատակիցներ են, մյուսները՝ նրանց ընտանիքների անդամներ: Քննության նյութերի համաձայն, 2004-2013 թթ. դիվանագետներն ապօրինաբար օգտվել են աղքատների համար նախատեսված Medicaid բժշկական ծրագրից, որպեսզի ծածկեն հղիության, ծննդաբերության եւ երեխաների խնամքի հետ կապված ծախսերը: Պատճառված վնասը գնահատվում է 1,5 մլն դոլար:

Ռուսական լրատվամիջոցները եւ մասնավորապես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում են, որ Մոսկվան ոչ միայն մերժել է ամերիկյան կողմի մեղադրանքը, այլեւ պատասխան քայլ է ձեռնարկել: ՌԴ Քննչական կոմիտեն հենց դեկտեմբերի 5-ին քրեական գործ է հարուցել ԱՄՆ-ում երեխաների, այդ թվում՝ ՌԴ-ում որդեգրվածների վաճառքի փաստի առթիվ:

«ՌԴ Քննչական կոմիտեի Հյուսիսարեւելյան դաշնային օկրուգի քննչական վարչությունը ստուգել է Ռոյթեր գործակալության եւ NBC հեռուստաալիքի լրագրողական հետաքննության շրջանակներում հրապարակված այն տեղեկությունները, թե որդեգրված ռուսաստանցի երեխաները հանձնվել են ուրիշ ընտանիքների եւ խախտվել են նրանց իրավունքները: Ստուգման արդյունքների հիման վրա քրեական գործ է հարուցվել ՌԴ ՔՕ 127.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (մարդկանց առեւտուր երկու եւ ավելի անձանց կամ անչափահասի նկատմամբ)», հայտարարել է Քննչական կոմիտեի պաշտոնական ներկայացուցիչ Վլադիմիր Մարկինը:

ՌԴ իրավապահ մարմինները պնդում են, որ «համացանցում՝ Yahoo-ում եւ Facebook-ում բացվել են անօրինական բորսաներ, որտեղ իրականացվում են ԱՄՆ քաղաքացիների որդեգրած երեխաների հետ կապված ապօրինի գործարքներ»: Մարկին տվյալներով, այդ ձեւով կնքվել են պայմանագրեր ՌԴ 26 անչափահաս քաղաքացիների վաճառքի վերաբերյալ: Այդ երեխաների մի մասը ենթարկվել է սեռական շահագործման:

**Պ. Ք.**

# Ադրբեջանական ընդդիմությունը «պոռնկագրություն է տարածո՞ւմ»

Հայտնի էր դարձել, որ Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության մամուլի խոսնակ Նաթիկ Ադիլովը «հրավիրվել է» ոստիկանության Բաքու քաղաքի գլխավոր վարչություն: Նրան «ընդունել էր» Բաքվի ոստիկանապետը՝ դատախազության հատուկ կարեւոր գործերով քննիչի մասնակցությամբ:

Մի քանի ժամ տեւած «զրույցից» հետո Ադիլովն ազատ էր արձակվել: Նա հայտնել էր, որ իրեն «գրավոր զգուշացում է արվել սոցիալական ցանցերում արտահայտած կարծիքների կապակցությամբ»:

ԱԺՃ մամուլի պատասխանատուն հրապարակել էր նաեւ «զգուշացման» բնօրինակը եւ ավելացրել, որ «ոստիկանությունը եւ դատախազությունը սպառնացել են հետագայում քրեական վարույթ նախաձեռնել»: Ադիլովն ասել էր, որ «այդ ամենը քաղաքական բազմակարծությունը խախտելու, խոսքի իրավունքը սահմանափակելու նպատակ է հետապնդում, եւ իշխանությունները ձգտում են փակել ընդդիմախոսների բերանը»:

Երեկ այդ թեման անսպասելի դրսեւորում է ունեցել: Ադրբեջանի դատախազության մամուլի քարտուղար Էլդար Սուլթանովը հանդես է եկել հայտարարությամբ, ըստ որի «Ադիլովն զգուշացվել է սոցիալական ցանցերում պոռնկագրություն եւ մարդկանց պատիվն ու արժանապատվությունը վիրավորող տեղեկություններ տարածելու անթույլատրելիության մասին, որը օրենքի շրջանակներում է»:

Իրոք, անցյալ մայիսին Ադրբեջանի խորհրդարանը փոփոխություններ է կատարել համապատասխան օրենքում եւ քրեական պատասխանատվություն սահմանել նաեւ համացանցում «անձի պատիվն ու արժանապատվությունը վիրավորող նյութեր տարածելու» համար: Այդ երկրում այդպես էլ չի ընդունվել «Դիֆամացիայի մասին» օրենք:

Բայց շատ արտառոց է, որ դատախազությունը ԱԺՃ մամուլի խոսնակին մեղադրել է նաեւ «սոցիալական ցանցերում պոռնկագրություն տարածելու» մեջ: Ստացվում է, որ ընդդիմադիր քաղաքական ուժի մամուլի հարցերով պատասխանատուն այնքան անգործ է մնացել, որ սոցիալական ցանցերում «պոռնկագրությո՞ւն է տարածում»:

Իրականության հետ որքանո՞վ կապ ունի դատախազության պնդումը, ԱԺՃ մամուլի խոսնակից արձագանք չի հնչել: Հավանաբար ինչ-որ բան իրոք այնպես չէ, ինչպես ավելի վաղ ներկայացրել էր Նաթիկ Ադիլովը: Ուրեմն ի՞նչ, հարեւան երկրի քաղաքական գործիչները նաեւ «պոռնկագրություն տարածելու միջոցո՞վ» են փորձում ինքնահաստատվել հասարակության աչքում:

Ոչինչ չես ասի, «լավ» միջոց է: Ամենայն հավանականությամբ, իշխող կուսակցությունը կխլի ԱԺՃ «նախաձեռնությունը»: Ադրբեջանում սկսվել են չափազանց դժվար ժամանակներ՝ կապված աննախադեպ գնաճի եւ սոցիալական դժգոհության ալիքի սպասումների հետ: Նման իրավիճակում պոռնկագրության տարածումը կարող է դիտվել «հանրային գերակա շահ», որպեսզի այդ ձեւով մարդկանց ուշադրությունը շեղվի օրեցօր ահագնացող սղաճից...

**Վ. Ա.**

## ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ԴԵՄ

# ԵՄ երկրները կվերականգնեն այցագրային ռեժիմը Բալկանների հետ



**Եվրոմիության երկրների արդարադատության եւ ներքին գործերի նախարարները պայմանավորվել են ժամանակավոր այցագրային ռեժիմ սահմանել բալկանյան պետությունների նկատմամբ: Այսպիսով, Եվրոմիությունը հավանություն է տվել Գերմանիայի եւ Ֆրանսիայի նախաձեռնությանը, որոնք մտահոգված են Բալկաններից փախստականների հարաճուն ներհոսքից, գրում է գերմանական «Շպիգել» շաբաթահանդեսը:**

**ԵՄ-ում ընդունված որոշման համաձայն, միության անդամ երկրներն իրավունք ունեն այցագրային ռեժիմը վերականգնել անօրինական ներգաղթյալների կամ քաղաքական ապաստանի անհիմն խնդրանքների թվի կտրուկ աճի դեպքում: Տվյալ միջոցը կարող է ձեռնարկվել միայն ծայրահեղ դեպքում եւ կգործի կես տարի:**

**Ըստ որում, եվրոպական երկրները չեն կարողանա նման ռեժիմ հաստատել սեփական հայեցողությամբ: Հարկ կլինի համապատասխան խնդրանքով դիմել Եվրոպայի խորհրդին, որտեղ դրա օգտին պետք է հանդես գա ԵՄ անդամ երկրների մեծամասնությունը:**

**2009 թվականին Եվրոմիությունը վերացրել էր այցագրերը այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Մակեդոնիան, Սերբիան եւ Չեռնոգորիան, իսկ 2010-ից ազատորեն ԵՄ մուտք գործելու իրավունքից օգտվում են նաեւ Ալբանիայի եւ Բոսնիա-Հերցեգովինայի քաղաքացիները: Գերմանիայում եւ եվրոպական մի շարք այլ պետություններում այդ երկրներից եկած փախստականների թիվը վերջին 1 տարում կտրուկ ավելացել է, ինչը հարուցում է տեղական իշխանությունների մտահոգությունը:**

**Պ. Ք.**

# Վախճանվել է Նելսոն Մանդելան




*1-ին էջից*

**1944 թ. Մանդելան դարձել է Աֆրիկյան ազգային կոնգրեսի (ԱԱԿ) Երիտասարդական լիգայի անդամ: Կոնգրեսը պայքարում էր երկրում ռասիզմի դրսեւորման՝ ապարթեիդի դեմ: 1953-ին ՀԱՀ կառավարությունը նրան արգելեց ելույթներ ունենալ հանրային միջոցառումների ժամանակ: 1956-ին նրան մեղադրեցին պետական դավաճանության մեջ, բայց հետո արդարացրին:**

**1960-ին, երբ իշխանություններն արգելեցին ԱԱԿ գործունեությունը, Մանդելան արդեն կազմակերպության ճանաչված առաջնորդն էր: 1961-ին նա սկսեց գլխավորել ԱԱԿ ռազմական կազմակերպությունը, իսկ մեկ տարի անց ձերբակալվեց եւ դատապարտվեց ցմահ բանտարկության: 1985 թվականին Մանդելան մերժեց քաղաքական պայքարից հրաժարվելու դիմաց ազատ արձակվելու ՀԱՀ նախագահ Պիտեր Բոտայի առաջարկությունը: Հինգ տարի անց նրան ազատ արձակեցին:**

**1993 թվականին Նելսոն Մանդելան եւ ՀԱՀ նախագահ Ֆրեդերիկ դե Քլերկը խաղաղության Նոբելյան մրցանակի արժանացան ապարթեիդի վերացմանն ուղղված իրենց ջանքերի համար: 1994-ին աֆրիկացի մեծամասնության մասնակցությամբ ՀԱՀ-ում անցկացված առաջին համազգային ընտրություններում Մանդելան ընտրվեց ՀԱՀ առաջին սեւամորթ նախագահ: Նա պետության ղեկավարի պաշտոնում մնաց մինչեւ 1999 թվականը:**

**2013-ի ամռանը Մանդելային հիվանդանոց տարան «թոքային վարակ» ախտորոշմամբ: Շուտով նրա վիճակը կտրուկ վատացավ, եւ բժիշկները թոքերի արհեստական օդափոխման սարք միացրին: Սեպտեմբերին նախկին նախագահին դուրս գրեցին եւ ուղարկեցին տուն, որտեղ ստեղծվեցին բուժման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Աշնանը քանիցս հաղորդումներ տարածվեցին Մանդելային կայուն օրհասական վիճակի մասին:**

**Պ. Ք.**

ՄՐՑՈՒՅԹ

# Է. Միլիտոնյանը՝ ՀՀ պետական մրցանակի հաղթող



Յուրաքանչյուր տարի ՀՀ պետական մրցանակի շուրջ քննարկումների պակաս չի զգացվում: Այս տարի քննադատությունների սլաքն ուղղվեց Հայաստանի գրողների միության նորընտիր նախագահ Էդվարդ Միլիտոնյանի կողմը: Նրա «Է» գիրքն այս տարի արժանացավ ՀՀ պետական մրցանակի: Ի դեպ, վերնշված ժողովածուի կողքին մրցույթին ներկայացված էին Էդուարդ Խաչիկյանի «Եվ արեւը մայր մտավ լուսաբացին», Դավիթ Մկր-Սարգսյանի «Երկվություն», Գուրգեն Խանջյանի «Ենոքի աչքը», Հրաչ Սարիբեկյանի «Երկվորյակների արեւը», Բակուր Կարապետյանի «Շուշեցու հիշատակարանը», Արեւշատ Ավագյանի «Հոգեգույներ ծածկագրերով», Վահագն Մուղնեցյանի «Զոհանվեր», Գոհար Նիկողոսյանի «Լռջացող խաղ», Շանթ Մկրտչյանի «Արտացոլանք, հեռու, բազմադեմ», Ալիս Հովհաննիսյանի «Ճյուղեր-տերեւներ» ստեղծագործությունները:

Էդվարդ Միլիտոնյանը որպես մրցանակ կստանա 10.000 ԱՄՆ դոլար:

Ստորեւ կներկայացնենք Է. Միլիտոնյանի մրցանակի արժանացած ժողովածուի բանաստեղծություններից մեկը, որը կոչվում է Սեր.

*Կապուտները իրար*
*այնպես են լիզում,*
*Քնքշանքի չարն է*
*զնգում վայրենի:*
*Ապրելու ջանքը*
*չի կործում իզուր,*
*Մահն է միշտ ծաղկում*
*կյանքի վազերին:*

*Դարչինի հոտից եւ*
*համից նշի*
*Կիմանաս ինչպես*
*զատվեց խավարից*
*Լույսը, որ սիրո*
*շերտերով լայնշի*
*Արարում է ցասկ՝*
*ի վեր ցավերից:*
*Եվ դու պտտվող*
*մարմինների հետ*
*Հղկում ես հոգուս*
*անկյունները սուր,*
*Երբ դառնա ողորկ ու*
*պինդ առհավետ,*
*Կընկնես ինչպես*
*սերմ հավերժող մասուր:*

Առայժմ ձեռնպահ մնալով մրցանակակիր ժողովածուի մասին կարծիք հայտնելուց՝ ասենք, որ ի պատասխան քննադատությանը, թե անպատեհ է Գրողների միության նախագահի դիրքում գրական մրցանակ ստանալը, Էդ. Միլիտոնյանը ասել է, որ գործը մրցանակի էր ներկայացրել նախագահի ընտրվելուց առաջ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# «Կամերատա Զալցբուրգ» նվագախումբը եւ բազմակի Գրեմմի մրցանակակիր Պինկաս Ցուկերմանը Երեւանյան բեմում

«Երեւանյան հեռանկարներ» 14-րդ միջազգային երաժշտական փառատոնի եզրափակումը տեղի կունենա դեկտեմբերի 11-ին՝ հատուկ նախագծով: Մեկ բեմում միասին հանդես կգան երկու աստղեր՝ «Կամերատա Զալցբուրգ» նվագախումբը եւ բազմակի Գրեմմի մրցանակակիր Պինկաս Ցուկերմանը:




Արամ Խաչատրյան համերգասրահում կայանալիք համերգային ծրագրում կհնչեն՝ Ստրավինսկու Պուլչինելլա սյուիտը, Մոցարտի Հաֆներ սերենադը, Բեթհովենի Ռոմանս սոլ մաժորը եւ Մոցարտի թիվ 39 սիմֆոնիան:

Հարկ է նշել, որ «Կամերատա Զալցբուրգ»-ը Եվրոպայի ամենահեղինակավոր նվագախմբերից է, որը հայտնի է իբրեւ դասական երաժշտության մեջ կատարելության խորհրդանիշ: Նվագախումբը եզակի է ողջ աշխարհում իրեն բնորոշ «Մոցարտյան հնչողության» համար: Նվագախմբի հետ աշխատել են դիրիժորներ Բեռնհարդ Փաումգարթները, Շանդոր Վեգը, սըր Ռոջեր Նորինգթոնը եւ Անդրաս Շիֆը: Անվանի մենակատարներ Աննե-Սոֆի Մութերը, Հիլարի Հանը, Ջուլիան Ռախլինը, Դանիել Հոփը, Ջոշուա Բելը, Թոմաս Զեհեթմայրը, Վերոնիկա Հագենը, Միցուկո Ուչիդան, Մյուրեյ Փերահիան, Օլլի Մուստոնենը, Դիթրիխ Ֆիշեր-Դիսկաուն, Քրիստոֆ Էշենբախը, Ֆիլիպ Հեռեվեգեն, Ռենե Ժակոբսը որպես հյուր երաժիշտներ հանդես են եկել «Կամերատա Զալցբուրգի» հետ

Արդեն չորս տասնամյակ է, ինչ Պինկաս Ցուկերմանը մնում է որպես ֆենոմեն համաշխարհային երաժշտության մեջ: Նրա անունը հավասարապես հարգանք է վայելում որպես ջութակահար, ալտահար, դիրիժոր, մանկավարժ եւ կամերային երաժիշտ: Պ. Ցուկերմանի 20122013թ-ի համերգաշրջանը ներառում է ավելի քան 100 ելույթներ Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում եւ Ասիայում: Նա արդեն 14 տարի է, ինչ Օտտավայի Ազգային արվեստի կենտրոնի նվագախմբի երաժշտական տնօրենն է, եւ չորս տարուց ի վեր հանդիսանում է Լոնդոնի Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժորը:

Նա 21 անգամ եղել է Գրեմմի մրցանակի թեկնածու, եւ երկու անգամ արժանացել այդ մրցանակին: Ձայնագրվել է Angel, CBS, Decca, Deutsche Grammophon, London, Philips, Sony, BMG Classics/RCA Victor Red Seal ընկերությունների համար: 2004 թվականին CBC ընկերությունը ձայնագրել է տասը մասից բաղկացած ֆիլմաշար՝ «Կոնցերտ ըստ Պինկասի», որն հեռարձակվել է ամբողջ աշխարհում: Իբրեւ կամերային երաժիշտ՝ Պինկաս Ցուկերմանը նվագել է երաժշտական աշխարհի այնպիսի մեծությունների հետ, ինչպիսիք են Դանիել Բարենբոյմը, Վլադիմիր Աշկենազին, Իցհակ Պեռլմանը, «Տոկիո» լարային քառյակը, Եֆիմ Բրոնֆմանը, Ժակլին դյու Պրեն: 2003-ին նա հիմնել է «Ցուկերման կամերային նվագողներ» համույթը, որը վերջին չորս տարիներին ելույթներ է ունեցել աշխարհի ամենահեղինակավոր բեմերում եւ փառատոներում:

Պինկաս Ցուկերմանը պարգեւատրվել է Իցհակ Սթերնի անվան գեղարվեստական գերազանցության մրցանակով, ստացել է «Սողոմոն թագավոր» պարգեւը: 1983-ին ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանը նրան պարգեւատրել է Արվեստի ազգային մեդալով:

Պինկաս Ցուկերմանը նվագում է 1742 թվականի Գուառներիուս դել Ջեզուի «Դուշկին» ջութակով:

«Լոս Անջելես թայմսը» մի առիթով գրել է. «Ցուկերմանը կարծես լինի հավերժ երիտասարդ մի վիրտուոզ՝ արտահայտչականորեն ճարպիկ, վարակիչ կերպով երաժշտական, տեխնիկապես անբասիր, թեթեւասահ: Ինչպես միշտ, ուրախություն է լինել նրա երաժշտական ընկերակցության մեջ»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Երգչախմբային արվեստի միջազգային օրը Հայաստանում

Դեկտեմբերի 8-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա համերգ նվիրված Երգչախմբային արվեստի միջազգային օրվան:

Համերգային ծրագրին մասնակցում են Հայաստանի պետական, սիրողական եւ մանկական 9 երգչախումբ. «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Տիգրան Հեքեքյան), «Փարոս» կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Ռաֆֆի Միքայելյան), Երեւանի կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Հարություն Թոփիկյան), «Հովեր»պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Սոնա Հովհաննիսյան), «Արթ վոկալ անսամբլ» Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու համերգային խումբը (գեղարվեստական ղեկավար Առնո Բարխուդարյան), Վանաձորի կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Տարոն Միրզոյան), Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հանրակրթական հիմնական դպրոցի երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Գայանե Մարդոյան), Արթիկի Դանիել Ղազարյանի անվան մանկական երաժշտական դպրոցի երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Կարինե Բիկիյան), «Սրտեղանի» երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Սարինա Աֆթանդիլյան):

Համերգային ծրագրում ընդգրկված են հայ, ռուս եւ արեւմտյան կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Երգչախմբային արվեստի միջազգային օրը աշխարհում նշվում է 1990 թվականից, դեկտեմբերի 8-ին, իսկ Հայաստանում այն երրորդ անգամ է տեղի ունենում:

Միջոցառումն իրականացվում է մշակույթի նախարարության եւ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի աջակցությամբ:

Ս. Հ.

# Երեւանում արգենտինական կինոյի փառատոն կանցկացվի

Երեւանում դեկտեմբերի 13-ին եւ 14-ին կկայանա Արգենտինական կինոյի փառատոն: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Հայաստանում Արգենտինայի դեսպանությունից, փառատոնի շրջանակներում իսպաներեն լեզվով, անգլերեն ենթագրերով կցուցադրվեն Գաբրիել Նեսսիի «Վինիլային Օրեր» (2012), Դանիել Բուրմանի «Քույր եւ եղբայր» (2010) եւ Արմանդո Բոի «Վերջին Էլվիսը» (2012) ֆիլմերը: Միջոցառումը կկայանա «Մոսկվայի տուն» մշակութագործարարական կենտրոնում: Մուտքն ազատ է:

# Մեծարանք Նորա Ազատյանին՝ 20-ամյա նվիրված աշխատանքի առթիվ



«Մշակույթին նվիրված կին, հրաշալի ասմունքող, բեղմնավոր նկարչուհի, ոգեշնչող ուսուցչուհի եւ հասարակական գործիչ»: Այս բառերով է սովորաբար դոկտ. Րաֆֆի Բեյլանը նկարագրել արվեստագետ Նորա Ազատյանին, որին որպես Դետրոյթի Թեքեյան Մշակութային միության 20-ամյա ատենապետի մեծարել են նոյեմբերի 24-ին Բեյլան Արվեստի կենտրոնում:

Ըստ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթում տպագրված Լյուսի Արդաշի հաղորդագրության, հանդիսությանը ներկա հոծ թվով թեքեյանցիներն ու Բեյլան եւ Ազատյան ընտանիքների երկարամյա բարեկամները ըմբոշխնել են տիկին Ազատյանի զարմանահրաշ նկարները, մինչ կատարվել է գեղարվեստական պատշաճ ծրագիր: Դոկտ. Բեյլանը ողջունել է ներկաներին եւ հիացմունքով արտահայտվել տիկին Ազատյանի մասին, ով գիտի արիստոկրատական վարվելաձեւով հաղորդակցվել բոլոր տարիքի եւ բնավորության տեր մարդկանց հետ: «Նա հարստացրել է բոլոր նրանց կյանքերը, ովքեր ճանաչել են նրան», ասել է նա:

Բոլոր ելույթ ունեցողները գովասանական խոսքերով անդրադարձել են նրա բարձր արժանիքներին եւ սկզբունքայնությանը եւ մասնավորապես նվիրվածությանը՝ հայկական մշակույթին, «Ուսուցիչ մը հովանավորիր» եւ «Որբերին՝ բարձրագույն կրթություն» ծրագրերին:

Երեւանի Կոմիտասի անվան երաժշտանոցի սան Արշո Ավետիքյանն (դաշնամուր) ու Հարրի Հովակիմյանը (ջութակ) կատարել են «Կարմիր վարդեր» հին ռոմանտիկ ստեղծագործությունը: Անահիտ Թումաճանը հուզումով արտասանել է Վահան Թեքեյանի «Տաղ հայերեն լեզուին» բանաստեղծությունը: Անակնկալ ելույթներով հանդես են եկել Հենրիկ Կարապետյանը (ջութակ) եւ Մայք Արզումանյանը (դաշնամուր):

Պրոֆ. Գեւորգ Բարդակչյանը, Միչիգանի համալսարանից, նշել է, որ 20 տարի որպես ԹՄՄ-ի ատենապետի հայ ժողովրդին եւ մշակույթին ծառայելուց հետո հանգստյան կոչվելը Նորա Ազատյանի համար մի փուլի ավարտն է եւ մեկ ուրիշ փուլի սկիզբը: «Նա միշտ պատրաստ է դիմակայելու նոր մարտահրավերներ», ասել է Բարդակչյանը:

Հանդիսությանը ներկա է եղել նաեւ Նյու Յորքից ժամանած, ճանաչված ռեժիսոր եւ դերասանուհի Նորա Արմանին:

Ամենաանձնական հիշողությունները ներկաների հետ կիսել է Նորայի ամուսինը՝ Երվանդ Ազատյանը, ով Կահիրեում «Արեւ» թերթի խմբագիրն էր այն ժամանակ, երբ ծանոթացել է իր ապագա կնոջ հետ:

ԹՄՄ-ի նորընտիր ատենապետ Դիանա Ալեքսանյանը ԹՄՄ-ի անունից Նորա Ազատյանին նվիրել է բյուրեղապակյա մակագրված մի ափսե առ ի գնահատանք նրա քսանամյա անխոնջ ջանքերի:

Վերջում Նորա Ազատյանը հանդես է եկել շնորհակալական խոսքերով:

Հ. Ծ.

# Արոնյանն արժանացավ ոսկե մեդալի

## *Վարուժան Հակոբյանը լավագույնն է պահեստայինների մեջ*



Ինչպես արդեն նշել էինք, Անթալիայում անցկացված շախմատի աշխարհի թիմային առաջնությունում մեր շախմատիստներից առավել հաջող հանդես եկավ Լեւոն Արոնյանը: Նա անցկացրած 8 պարտիաներում տոնեց 4 հաղթանակ, նույնքան հանդիպում ավարտեց ոչ-ոքի` վաստակելով 6 միավոր: Մրցաշարի արդյունքներն ամփոփելիս պարզվել է, որ Լեւոնի արդյունքը լավագույնն է առաջին խաղատախտակի վրա հանդես եկած շախմատիստների մեջ: Նա պարգեւատրվել է ոսկե մեդալով: Արծաթե մեդալը բաժին է հասել ԱՄՆ-ի թիմի առաջատար Հիկարու Նակամուրային, որը վաստակել է հնարավոր միավորների 64,3 տոկոսը (4,5 միավոր 7 հնարավորից): Բրոնզե մեդալակիր է դարձել ուկրաինացի Վասիլի Իվանչուկը` 62,5 տոկոս (5 միավոր 8 հնարավորից):

Պահեստային խաղացողների մեջ էլ լավագույն արդյունքի է հասել ԱՄՆ-ի թիմում հանդես եկած Վարուժան Հակոբյանը` 66,7 տոկոս (4 միավոր 6 հնարավորից), որն արժանացավ ոսկե մեդալի: Արծաթե եւ բրոնզե մեդալներ նվաճեցին չինացի Յանգի Յուն` 64,3 տոկոս (4,5` 7-ից) եւ ռուսաստանցի Նիկիտա Վիտյուգովը` 58,3 տոկոս (3,5` 6-ից):

Հիշեցնենք, որ Վարուժան Հակոբյանը ԱՄՆ-ի հավաքականի կազմում 2006-ին եւ 2008-ին դարձել է համաշխարհային օլիմպիադայի բրոնզե մեդալակիր, իսկ 2010-ին` աշխարհի թիմային առաջնության փոխչեմպիոն:

2-րդ խաղատախտակի վրա լավագույն արդյունքի է հասել ուկրաինացի Անտոն Կորոբովը` 5,5 միավոր 8 հնարավորից: Նույնպիսի արդյունքով արծաթե մեդալի է արժանացել ռուսաստանցի Սերգեյ Կարյակինը: Բրոնզե մեդալը նվաճել է չինացի Լիրեն Դինգը (5 միավոր 8-ից):

3-րդ խաղատախտակի վրա մրցանակակիրներ են դարձել գերմանացի Դանիել Ֆրիդմանը` 64,3 տոկոս (4,5` 7-ից), ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ալեքսանդր Օնիշչուկը` 62,5 տոկոս (5` 8-ից) եւ Յուե Վանգը` 58,3 տոկոս (3,5` 6-ից):

4-րդ խաղատախտակի վրա մեդալների են արժանացել ռուսաստանցի Յան Նեպոմնյաշչին` 78,6 տոկոս (5,5` 7-ից), չինացի Բու Քսիանգժին` 71,4 տոկոս (5` 7-ից) եւ ուկրաինացի Յուրի Կրիվորուչկոն` 57,1 տոկոս (4` 7-ից):

Հիշեցնենք, որ Եվրոպայի թիմային առաջնությունում Լեւոն Արոնյանն առաջին խաղատախտակի վրա արժանացել է բրոնզե մեդալի: Լեւոնը հունվարի 11-26-ը հանդես կգա Վեյք Ան Զեեի շախմատի ավանդական մրցաշարում: Նրա մրցակիցները կլինեն Հիկարու Նակամուրան, Ֆաբիանո Կարուանան, Բորիս Գելֆանդը, Սերգեյ Կարյակինը, Դոմինգես Լենիերը, Արկադի Նայդիչը, Անիշ Գիրին, Ուեսլի Սոն, Պենտալա Հարիկրիշնան, Ռիչարդ Ռապորտը եւ Լյուկ վան Վելին:



# Հռիփսիմե Խուրշուդյանը վերսկսել է մարզումները



**Ծանրամարտի Եվրոպայի չեմպիոնուհի, օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Հռիփսիմե Խուրշուդյանը վերադառնում է մեծ սպորտ, ինչպես եւ խոստացել էր ամուսնանալու ժամանակ: Հարկադրված դադարը պայմանավորված էր մարզուհու մայրանալով:**

**Հռիփսիմեն շուրջ 2,5 ամիս է, ինչ վերսկսել է մարզումները: Այժմ նա արդեն կարողանում է իրեն ենթարկել 100 կգ-անոց ծանրաձողը: Ընտանիքի անդամներն էլ ըմբռնումով են վերաբերվում Հռիփսիմեի որոշմանը, ամեն կերպ աջակցում են նրան, իսկ փոքրիկի խնամքի հարցում մեծապես օգնում է սկեսուրը:**

**Անվանի մարզուհին պատրաստվում է հաջորդ տարվա ապրիլին կայանալիք Եվրոպայի առաջնությանը, որտեղ նպատակադրվել է մրցանակակիր դառնալ: Իսկ եթե չստացվի, ապա կփորձի այդ բացը լրացնել աշխարհի առաջնությունում: Իսկ նրա հեռահար նպատակը 2016-ին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ամառային օլիմպիադային մասնակցելն է:**

# Մովսիսյանը կմասնակցի բարեգործական խաղի

**Մոսկվայի «Սպարտակի» եւ ՀՀ հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը դեկտեմբերի 22-ին Գլենդեյլի մարզահամալիրում կմասնակցի հերթական բարեգործական խաղին: Մովսիսյանը Լոս Անջելեսում ծնկի վիրահատությունից հետո ապաքինվում է:**

# Հաղթական մեկնարկ

**Գրոսմայստեր Կարեն Գրիգորյանը հաղթանակով մեկնարկեց Իսպանիայում սկսված շախմատի մրցաշարում: Նրա մրցակիցը պորտուգալացի Նունո Գուրեյրոն էր: Կարենն իր անհատական վարկանիշով (2604) 2-րդն է մրցաշարի 92 մասնակիցների մեջ: Ամենաբարձր վարկանիշը (2660) ունի ուկրաինացի Սերգեյ Ֆեդորչուկը:**

# Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

**Երեկ Բրազիլիայում տեղի ունեցավ 2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության մասնակիցների վիճակահանությունը: Մասնակից 32 հավաքականները բաժանվեցին 8 խմբի: Ահա խմբերի կազմը:**

**A խումբ. Բրազիլիա, Կամերուն, Մեքսիկա, Խորվաթիա:**
**B խումբ. Իսպանիա, Չիլի, Ավստրալիա, Հոլանդիա:**
**C խումբ. Կոլումբիա, Կոտ դ Իվուար, Ճապոնիա, Հունաստան:**
**D խումբ. Ուրուգվայ, Իտալիա, Կոստա Ռիկա, Անգլիա:**
**E խումբ. Շվեյցարիա, Էկվադոր, Հոնդուրաս, Ֆրանսիա:**
**F խումբ. Արգենտինա, Նիգերիա, Իրան, Բոսնիա:**
**G խումբ. Գերմանիա, Գանա, ԱՄՆ, Պորտուգալիա:**
**H խումբ. Բելգիա, Ալժիր, Հար. Կորեա, Ռուսաստան:**

# Արաս Օզբիլիս. «Հասկացա, որ ցանկանում եմ պաշտպանել Հայաստանի դրոշը»

***Մոսկվայի «Սպարտակում» հանդես եկող Արաս Օզբիլիսը հարցազրույց է տվել «Սովետսկի Սպորտի» թղթակցին: Թեեւ Արասը կարողանում է ռուսերեն խոսել, սակայն նախընտրել է հարցազրույց տալ անգլերենով, որպեսզի ոչինչ չփոխթի:***

**- Ռուսաստանում իսկական ձմեռ է: Կիրակի օրն էլ Ռոստովում, որտեղ «Սպարտակն» անցկացնելու է այս տարվա վերջին հանդիպումը, 1-4 աստիճան ցուրտ է սպասվում: Արաս, հնարավո՞ր է դեկտեմբերին Ռուսաստանում ֆուտբոլ խաղալ:**

- Եթե անկեղծ, ապա խաղադաշտերի մեծամասնությունն ահավոր վիճակում է: Սակայն ստիպված ենք խաղալ: Նույնիսկ -5 աստիճանի դեպքում կարելի է ֆուտբոլ խաղալ, թեեւ ցուրտ եղանակը խնդիրներ է ստեղծում: Հատկապես դժվար է փոխարինման դուրս գալ եւ միանգամից խաղի մեջ ներգրավվել: Սակայն ֆուտբոլիստի համար եղանակային անբարենպաստ պայմանները չպետք է խոչընդոտ լինեն:

**- «Վոլգայի» հետ խաղում առաստ ձյուն էր տեղում: Վիճակվե՞լ է ավելի վատ պայմաններում խաղալ:**

- Այո, 3 տարի առաջ «Այաքսի» կազմում Մոսկվայում խաղացել եմ «Սպարտակի» դեմ Եվրոպայի լիգայում: Դա փետրվարին էր եւ ավելի ցուրտ եղանակ էր:

**- Թիմի գլխավոր մարզիչը խոստացել է մի քանի օր հանգիստ տրամադրել, եթե «Ռոստովի» հետ հաջող խաղաք:**

- Չէի հրաժարվի մի քանի օրվա հանգստից, քանի որ ամռանը գրեթե արձակուրդ չունեցա: Միայն 10 օր եմ հանգստացել: Այդ ժամկետն իմ օրգանիզմին բավարար չէ:

**- Ուրեմն ամեն ինչ կանե՞ք հաղթելու համար:**

- Իհարկե: Հարցը միայն հանգստյան օրերը չեն: Այդ խաղը շատ կարեւոր է մրցաշարային առումով: Հետո նոր կարելի է մտածել հանգստի մասին:

**- Ի դեպ, որտե՞ղ ես անցկացնելու արձակուրդդ:**

- Սկզբում կմեկնեմ Ամստերդամ: Այնտեղ է իմ տունը, ընտանիքս: Հետո բոլորովս կուղեւորվենք Դոմինիկյան Հանրապետություն, որտեղ էլ կդիմավորենք Նոր տարին:



**- Քեզ բախտ է վիճակվել բնակվել մի քանի երկրներում: Դու ծնվել ես Թուրքիայում: Օրինակ, ինչպե՞ս են այնտեղ դիմավորում Նոր տարին:**

- Գաղափար չունեմ, քանի որ միայն մեկ տարի եմ ապրել Թուրքիայում: Իսկ ամենահիշարժանը 2000-ին Գերմանիայում տեղի ունեցած տոնակատարությունն էր, որը տպավորվել է: Այն ժամանակ ես 10 տարեկան էի եւ մենք ընտանիքով Գերմանիայում էինք:

**- Մանկության տարիներին հավատո՞ւմ էիր Ձմեռ պապին:**

- Իսկ նա ո՞վ է: Նրա մասին չեմ լսել: Երեւի դա մեր Սանտա Կլաուսն է: Փոքր տարիքում հավատում էի նրա գոյությանը:

**- Ո՞ր երկիրն ես համարում քո հայրենիքը:**

- Իհարկե, Հայաստանը:

**- Սակայն մինչեւ հավաքական հրավիրվելը երբեք չէիր եղել Հայաստանում:**

- Այո: Իմ հարազատները սփռված են ողջ աշխարհով մեկ: Ընտանիքս բնակվում է Հոլանդիայում: Գուցե ցանկանում էի Հայաստան այցելել, սակայն չէր ստացվում:

**- Քո մասին գրում էին, որ սկզբում համաձայնվել ես հանդես գալ Հոլանդիայի հավաքականում: Եվ միայն հետագայում ես որոշել խաղալ Հայաստանի ընտրանիում:**

- Ինձ հրավիրել էին Հոլանդիայի երիտասարդական հավաքական: Այդ ժամանակ «Այաքսի» կազմում ուսումնամարզական հավաքի էի մեկնել ԱՄՆ: Որոշեցի չմեկնել Հոլանդիայի հավաքական, այլ սրտիս խորքում հասկացա, որ ցանկանում եմ պաշտպանել Հայաստանի դրոշը:

# Շուշան Սարգսյանը գլխավորում է աղյուսակը

Կիսլովոդսկում ընթացող շախմատի կանանց «Պլազա-2013» մրցաշարում հաջող է հանդես գալիս Վայքը ներկայացնող 21-ամյա շախմատիստուհի Շուշան Սարգսյանը: 10 մասնակիցներով շրջանաձեւ մրցակարգով անցկացվող մրցաշարում Շուշանը 7 տուրից հետո 6 միավորով ռուսաստանցի Դինարա Դորջիեւայի հետ գլխավորում է աղյուսակը:

Մեկնարկում նա հաշտություն կնքեց իր հայրենակցուհի, երեւանցի Արմինե Բաբայանի հետ, ապա 3 անընդմեջ հաղթանակ տոնեց Վիրա Տառլեւայի, Վալերիա Ռյանովայի եւ Այգուլ Բայսալովայի նկատմամբ: 5-րդ տուրում հայ շախմատիստուհին ոչ-ոքի խաղաց 65-ամյա Վալենտինա Կոզլովսկայայի հետ, ապա 2 անընդմեջ հաղթանակ տոնեց Ամինաթ Դոթդաեւայի եւ Դիանա Պապիյանցի հետ մրցախաղերում:

Արմինե Բաբայանը 4,5 միավորով 5-րդ տեղում է:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Նամակ՝ երկրաշարժի երկրից

*«Ուներիս հետ» անտիպ գրքից ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում քրոջս աղջկա՝ Աշխենի՝ 1988 թ. դեկտեմբերի 13-ի նամակը Երեւանից, 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի մասին, առանց մեկնաբանության:*

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ, Լոս Անջելես

«Սիրելի մորեղբայր, չցանկանալով գրում եմ քեզ այս նամակը: Ձեռքս չի գնում անգամ գրիչ բռնելու: Այս ահավոր եւ սոսկալի դժբախտությունը փշրվեց մեր գլխին որպես լրացում մեր ժողովրդի 9 ամիս կրած տառապանքի ու զրկանքի, ոտնահարման ու արհամարհանքի: Ինչ ասեմ, խոսք անգամ չեմ գտնում քեզ նկարագրելու, թե ինչ է կատարվում հիմա Հայաստանում:

Կներես, նախ ասեմ, որ մենք բոլորս, Արամիկը (Աշխենի տղան) գյուղում է, տատիկի ու մամիկի մոտ, անվնաս ենք: Երեւանում երկրաշարժ կոչվող այդ գեհենը ուներ 6-6,5 բալ ուժգնություն, ավերածություններ չկան, մարդկային զոհեր քիչ կան, այն էլ նրանք, ովքեր եղել են այդ օրհասական քաղաքներում ու գյուղերում:

Ամեն ինչ մեզ մոտ տարերային ու անկազմակերպ է, շունը տիրոջը չի ճանաչում, կատարյալ քաոսի այս պայմաններում, ահավոր դժբախտության բեռի տակ ոչ մեկի աչքից արցունք չի թափվում: Էլ ոչ մեկին ուժ չի մնացել անգամ արտասվելու: Ամբողջ աշխարհը մեզ ձեռք մեկնեց օգնության: Ինքնաթիռներ են գալիս աշխարհի բոլոր ծայրերից, ցավակցական հեռագրեր են ստացվում այնպիսի երկրներից, որոնք երեւի այս դեպքերի հետ կապված են առաջին անգամ լսում հայի անունը: Ճակատագրի ինչպիսի՜ ծաղր...:

Այո, կկառուցվեն մեր երեք քաղաքներն ու կվերականգնվեն 180 գյուղերն ու ավանները, ցավոք սրտի, մարդկային կյանքերը վերադարձնել հնարավոր չէ: Երեկ Время-ով ցույց էին տալիս մի գյուղ (չլսեցի անունը), որտեղ զոհվել էին բոլոր երեխաներն ու երիտասարդությունը, մնացել էին կուչ եկած մի քանի տատիկ-պապիկ, եւ մի կին ներկայացնում էր այս ամենը: Չենք ուզում նայել դաժան վայրերից ռեպորտաժները (հաղորդումները), բայց չենք կարողանում: Աստված պահի մեր ազգին ավելի մեծ արհավիրքներից:

Անկոտրում Արցախ աշխարհը, որն ինքն է կարոտ մեր օգնությանը, մեզ օգնելու համար 700412 հաշվին արդեն փոխանցել է 3 միլիոն 700 հազար ռուբլի, ուղարկել է իր ողջ տեխնիկան, ինչ որ ունի... ինչպիսի անարդարություն:

Մի քանի վայրկյանների ընթացքում ոչնչացել է Լենինականի 80 տոկոսը, Սպիտակը ամբողջությամբ հավասարվել է գետնին, մի փոքր լավ է վիճակը Կիրովականում, որտեղ բնակելի շենքերից փլուզվել են 180-ը, չհաշված հիմնարկություններ, դպրոցներ, մանկապարտեզներ եւ այլն:

Մենք բոլորս լավ ենք, սովորական: Սիլվայից 2 օր առաջ հեռագիր էր եկել, շատ էր վախեցել: Արայիկի (Աշխենի ամուսինը) տրամադրությունը տեղը չէ, մոտ 17 հոգի զոհվել եւ կորել են Լենինականում (քրոջ 2 թոռը, մորաքրոջ թոռը, հորեղբոր 2 տղաները ընտանիքներով եւ այլն):

Նույնիսկ ցավակցական խոսքերն են կորցրել իրենց իմաստը: Պատմում են, որ Լենինականում երբ հարազատի դիակն են գտնում, ուրախությունից չգիտեն ինչ անեն: Մարդիկ արժանի չեն անգամ դագաղի, ինչպիսի սոսկալի ճակատագիր: ... լսել ենք, որ դուք էլ շատ մեծ օգնություն եք կազմակերպում տուժածների համար:

Աստված պահի կենդանի մնացածներին, տա Աստված, որ մեր խեղճ ազգը չխելագարվի 9 ամիսների ընթացքում իր տեսածներից...

Լավ է՝ մեզ մոտ շատ ցուրտ չէ, դեռ ձյուն չկա, եւ արդեն 6-րդ օրն է աղետի, բայց դեռ շատ ու շատ մարդիկ գիշերում են խարույկների մոտ: Հարյուրհազարներով մնացել են անօթեւան:

Քեռի ջան, չեմ կարողանում գրել: Փորձում եմ ուրիշ-ուրիշ բաների մասին գրել, բայց չի ստացվում: Չեմ ուզում իմ այս գուժկան-նամակով քո հոգեկան աշխարհն էլ տակնուվրա անել... Համբուրում եմ՝ Աշխեն»:

# Սալեմի հայկական եկեղեցին 100 տարեկան է եւ ունի նոր հոգեւոր հովիվ



Նյու Հեմփշիրի Սալեմ փողոցում գտնվող հայկական «Արարատ միաբանության» եկեղեցին իր հիմնադրման 100-ամյակն է նշել նոյեմբերին իր շարքերում ընդունելով նոր հոգեւոր հովիվ՝ պաստոր Սեմ Քաջիկյանին, որն ընտանիքի հետ վերջերս է տեղափոխվել այնտեղ Կանադայից:

Ըստ «Արմինյն Միրըր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդագրության՝ 1800-ականների վերջերին եւ 1900-ականների սկզբներին որոշակի թվով հայեր հաստատվել են Սալեմում եւ զգալով, որ մինչեւ Լոուրենս (Մասաչուսեթս) հասնելը հավատացյալների համար դժվարություն է ստեղծում, 1912 թվի հոկտեմբերին մի հանձնախումբ են կազմել, որն զբաղվել է տեղում եկեղեցի կառուցելու գործով: Հյուսիսարեւելյան փողոցի երկաթուղային ընկերությունը հողատարածք է հատկացրել, իսկ «Քրիստոսի միացյալ եկեղեցական կոնֆերանսը» (ՔՄԵԿ)՝ ֆինանսական օժանդակություն ցուցաբերել: Կառուցումը սկսվել է 1913-ի հուլիսին, եւ եկեղեցին օծվել է նույն թվի նոյեմբերի 12-ին: Եկեղեցու այսօրվա հավատացյալներից շատերը նախկին 19 սկզբնավորողների հետնորդներն են: Հարյուր տարվա ընթացքում շատ բան է փոխվել: Նախկին ագարակների փոխարեն վեր են խոյացել արդիական առեւտրի կենտրոններ: Լոուրենսի եւ Սալեմի եկեղեցիները միաձուլվել են իրար, եւ արարողությունն էլ հայերենից անգլերենի է վերածվել: Սակայն եկեղեցին դեռեւս մնում է որպես համախմբող օջախ: Նոր հոգեւոր հովվի առաջին պատարագին ներկա են գտնվել ՔՄԵԿ-ի Հյուսիսային Ամերիկայի Հայկական ավետարանական միության եւ Հայկական միսիոներական ընկերության ներկայացուցիչները:

Արարողությունից հետո «Տուսկան» ռեստորանում ճաշկերույթ է տեղի ունեցել, որի ընթացքում հյուրերը ըմբոշխնել են Բոստոնի «Քեֆ» համույթի երաժշտական համարները: Սառա Գիլմանը ներկայացրել է Արարատ եկեղեցու հարյուրամյա պատմությունը, իսկ Սալեմի ավագ դպրոցի ուսանող Ջեկ Բրունելը ցուցադրել է էկրանի վրա ավելի քան 500 լուսանկարներ եկեղեցու հետ կապված նշանակալի իրադարձությունների մասին:

Նյու Հեմփշիրի կառավարիչ Մեգի Հասանը հավաստագիր է ստորագրել, որով ճանաչել է եկեղեցու կատարած դրական դերը համայնքում:

Հ. Ծ.

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ, ՆՅՈՒ ՋԵՐՍԻ

# Հասան Ջեմալը՝ «Ինգլվուդ Կլիֆսի» ԹՄՄ կենտրոնում

Ռամկավար Ազատական կուսակցության հրավերով նոյեմբերի 9-ին Ինգլվուդ Կլիֆսի (Նյու Ջերսի) Թեքեյան մշակութային միության կենտրոնում նախաճաշի սեղանի շուրջը հանդիպման է հրավիրվել Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության պարագլուխներից Ջեմալ փաշայի թոռ Հասան Ջեմալը՝ ներկայացնելու իր «1915: Հայերի ցեղասպանությունը» գիրքը՝ թուրքերեն գրված եւ հրատարակված: Ըստ «Արմինյն Միրըր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի, ներկա են գտնվել նաեւ այլ կազմակերպությունների (ինչպես օրինակ՝ Ամերիկայի հայկական համագումարի եւ Վարդանանց ասպետների) ներկայացուցիչներ:



Բացման խոսքը կատարել է դոկտ. **Վաղինակ Դարբինյանը:** Գրքի նախաբանը, արեւմտահայերենի թարգմանված, կարդացել է Սիրիայից վերջերս Մ. Ն. տեղափոխված **Հակոբ Ադամյանը**: Գիրքը ամբողջությամբ հայերեն է թարգմանվելու շուտով ԹՄՄ-ի ջանքերով: Նման հանդիպումների կարեւորության մասին է խոսել ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչության անունից Սահակ Սարգսյանը:

Այնուհետեւ անգլերեն լեզվով ելույթ է ունեցել Հասան Ջեմալը, ով խոսել է մասնավորապես գրքի վերնագրի առնչությամբ իր ներքին հակամարտության՝ տվյալ բառի օգտագործման մասին: Նա նշել է, որ 2011 թվի ապրիլի 24-ին «Միլիեթ» թերթում տպագրված «Ապրիլի 24-ի առթիվ ես կիսում եմ հայերի ցավը» խորագրով հոդվածը գրելիս չի օգտագործել ցեղասպանություն բառը, բայց հետո համոզվել է, որ դա իրոք «դիտավորյալ եւ ծրագրված» գործողություն է եղել, մարդկության դեմ գործված հանցագործություն: Անդրադարձել է Հրանտ Դինքի հետ իր հանդիպումներին եւ ներքին երկար «ընդվզումներից» ու «տարաձայնություններից» հետո, որպես ժողովրդավարության եւ ազատ խոսքի ջատագովի, եզրակացրել է, որ «ցեղասպանություն» եզրը լավագույնս է բնորոշում կատարվածը:

Նրա խոսքերը մեծ տպավորություն են թողել ներկաների վրա:

Հ. Ծ.


ВТБ

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն հայտարարում է բաց երկփուլանի մրցույթ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին թարգմանչական ծառայություններ տրամադրելու համար **թարգմանիչներ ընտրելու** նպատակով:

Մրցութային հայտերը եւ առաջարկները անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հետեւյալ հասցեով. Երեւան ք. 0010, Մ.Խորենացու փ., շ.15/1:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ «14» հունվարի 2014թ. ներառյալ, ժ.17:00:

Մրցութային հայտերով ծրարների բացումը տեղի կունենա «17» հունվարի 2014թ., ժ.17:00:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալ ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի Մրցութային կոմիտեին, ինչպես նաեւ այցելել Բանկի պաշտոնական կայք:

Հասցեն. ՀՀ, ք. Երեւան, 0010, Մ.Խորենացու փ., շ.15/1:

**Կոնտակտային անձինք.**

*Լուսինե Սուսանյան.*
Հեռ. (+37410) 51-37-49, ներքին. 8 3302
Էլ. փոստի հասց. l.susanyan@vtb.am
*Ալեքսանդր Ավետիսյան*
Հեռ. (+37410) 51-37-30, ներքին. 8 0101
Էլ. փոստի հասցե. a.h.avetisyan@vtb.am

**Սրբագրում եւ խմբագրում**
**ամեն ծավալի ու բովանդակության**
**հայերեն տեքստերի, գրքերի**
**E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 6.12.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: